ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

# Ժողովուրդ

15 մարտի չորեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

37
(2703)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

# Ո՞Վ Է, Ի ՎԵՐՋՈ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐԸ



Երեկ՝ մամուլի ասուլիսի ժամանակ, լրագրողները հարց ուղղեցին վարչապետ Նիկոլ Փաշինյանին. լրագրողներից մեկը հետաքրքրվեց՝ Արցախի դեմ հնարավոր էսկալացիայի դեպքում արդյոք Հայաստանն ապահովելու է Արցախի անվտանգությունը, արդյոք Հայաստանը շարունակում է մնալ Արցախի անվտանգության երաշխավորը: Փաշինյանը պատասխանեց. «Ինչո՞ւ ես ստորագրեցի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունը. պարզ պատճառով՝ընկալելով, որ այդ իրավիճակում Հայաստանը չի կարող լինել ԼՂ անվտանգության լիարժեք երաշխավոր, հետեւաբար պետք էր ստեղծել մի համակարգ, որը կերաշխավորի ԼՂ անվտանգությունը: Համաձայն եռակողմ հայտարարության եւ դրանից հետո ՌԴ Դաշնային խորհրդի կայացրած որոշման, որը նախագահին թույլ է տալիս զորքեր ուղարկել ԼՂ, այս ամենով արձանագրվել է, որ ԼՂ անվտանգության երաշխավորը Ռուսաստանն է»: Սակայն նկատենք, որ նրա այս հայտարարություններն ու խոսքը հակասում են փաստաթղթերին: Բանն այն է, որ 2020 թվականի հուլիսին Հայաստանն ընդունել է Ազգային անվտանգության ռազմավարությունը: Հենց այդ փաստաթղթում Ազգային շահեր բլոկի 4.3 կետում նշված է. «Հայաստանի Հանրապետությունը Արցախի անվտանգության երաշխավորն է: Այս դերակատարումը պայմանավորված է Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը ռազմական ճանապարհով լուծելու Ադրբեջանի քաղաքականությամբ, ինչը գոյութենական սպառնալիք է Արցախի բնակչության համար»: Ընդ որում՝ այս նախադասությունն ամբողջ ռազմավարության մեջ մի քանի անգամ նշված է: Ստացվում է՝ Փաշինյանի այդ հայտարարությունը հակասում է ռազմավարությանը, նաեւ ՔՊ, կառավարության ծրագրերին, որտեղ եւս ամրագրված է անվտանգության երաշխավոր լինելը: Իհարկե, 44-օրյա պատերազմը եղել է այս հայեցակարգի ընդունումից հետո, սակայն եթե Հայաստանը հրաժարվում է լինել ավտանգության երաշխավոր, ապա պետք է փոխվեն համապատասխան փաստաթղթերը:



Ինչպես արդեն հայտնել ենք, ՔՊ-ն երեկ վարչության նիստ է արել՝Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ: «Ժողովուրդ» օրաթերթին բացառիկ մանրամասներ են հայտնի դարձել ՔՊ նիստից: Տեղեկացանք, որ նիստը 4 ժամից ավել է տեւել, անցել է գերլարված մթնոլորտում: Փաշինյանը շատ անտրամադիր է եղել: Նիստի սկզբում ՔՊ-ականները Փաշինյանից հետաքրքրվել են Հայաստանի ու Արցախի շուրջ տեղի ունեցող զարգացումներից, մասնավորապես՝Լաչինի միջանցքի հետ կապված: Վարչապետն ասել է, որ այդ հարցում որեւէ լավ բան չկա: Նիստը թեժացել է հատկապես Արսեն Թորոսյանի շուրջ տեղի ունեցող իրադարձությունների թեմայի արծարծման ժամանակ: Արսեն Թորոսյանը ամեն կերպ փորձել է արդարանալ Փաշինյանի ու թիմակիցների առաջ, տարբեր պատճառաբանություններ է բերել, թե ինչպես է ստացվել, որ իր պաշտոնավարման օրոք կորոնավիրուսի պայքարի անվան տակ այդքան չարաշահումներ են եղել: Արսեն Թորոսյանը ՔՊ վարչության նիստը լավ առիթ է համարել Փաշինյանի հետ հանդիպելու ու նրան բացատրություններ տալու համար, սակայն նրան այդպես էլ չի հաջողվել լեզու գտնել, համոզել վարչապետին իր հետ մեղմ վարվել: Փաշինյանը շատ չոր է արձագանքել Արսեն Թորոսյանի արդարացումներին, գրեթե չի լսել նրան: Վարչապետը, մասնավորապես, ասել է, թե սպասում է նախաքննության ընթացքին, որից հետո պարզ կլինի, թե ում հետ են գործ ունեցել: Վարչության մյուս անդամները վախից չեն խառնվել խոսակցությանը, լուռ են եղել: Թորոսյանն էլ ասել է՝եթե իրեն թիմում չեն հավատում, ապա անելիք չունի: ՔՊ-ում չեն բացառում, որ բանը հասնի նրան, որ Թորոսյանն առաջիկայում վայր դնի մանդատը:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ՀՀ քննչական կոմիտեն 4-րդ անգամ է երկարացրել Արցախի պաշտպանության բանակի նախկին հրամանատար Միքայել Արզումանյանի կալանքը: «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ փետրվարի 27-ին դատարանը որոշել է, որ նա եւս երկու ամիս պետք է մնա կալանքի տակ: Հավելենք, որ արդեն 6 ամիս է, ինչ Արզումանյանը կալանքի տակ է: Հիշեցնենք, որ 2022թ.-ի սեպտեմբերի 1-ին դատախազությունը հայտարարեց, որ Արցախի պաշտպանության բանակի նախկին հրամանատար, Արցախի նախագահի խորհրդական Միքայել Արզումանյանին մեղադրանք է առաջադրվել 2020 թվականի արցախյան պատերազմի ընթացքում ռազմավարական կարեւոր նշանակություն ունեցող «Արեգա» բարձունքը եւ հարակից մարտական դիրքերն ազատագրած անձնակազմին «նահանջ» հրաման տալու համար: Երեկ էլ Նիկոլ Փաշինյանն իր սուլիսում, հենց Արզումանյանին ակնարկելով, ասում էր, թե մարդիկ միջնորդում են, որ ներողամիտ լինենք: Բա չբացահայտվի՞՝ ինչպես ընկավ Շուշին: Այլ կերպ ասած, երեկ Փաշինյանը, քննչականի փոխարեն, գրեց Արզումանյանի մեղադրական դատավճիռը:



«Ժողովուրդ» օրաթերթը արցախցիներից պարբերաբար ահազանգեր է ստանում, որ գնաճն Արցախում նոր ռեկորդներ է սահմանել, հատկապես մրգերի եւ բանջարեղենների գները աստղաբաշխական թվերի են հասել: Արցախի ամբողջական բլոկադայի պայմաններում հատկապես վերջին օրերին անհնար է դարձել անգամ սննդամթերքի ներկրումը: Արցախից ահազանգեցին, որ լոլիկի 1 կիլոգրամի գինը հասել է 3000-3500-ի, սմբուկինը՝3500, պղպեղինը՝4500, շոկոլադի 1կգ-ը (տեսականի գրեթե չկա) 7000-8000-ի սահմաններում է տատանվում: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ մրգերի ու բանջարեղենի շատ տեսակներ, օրինակ՝խնձոր, նարինջ, գազար, առհասարակ, չկան: «Կտրոնները ձեռքներիս՝շրջում ենք, բայց չենք կարողանում խանութներից անգամ առաջին անհրաժեշտության միրգ կամ բանջարեղեն գնել»,-ասաց արցախցի մեր զրուցակիցը: Սրան զուգահեռ՝ Արցախում գործազրկությունն է ավելացել, իսկ աշխատավարձերը կտրուկ նվազել են: Ստացվում է՝ արցախցիները, որ արդեն 3 ամսից ավելի է՝ շրջափակման մեջ են, թշնամու ուղիղ նշանառության տակ, նաեւ հումանիտար աղետի հետեւանքներն են ամենայն դառնությամբ կրում:

«ԱՐԱԲՈ»

# ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԵՏ ԱՅՍՊԵՍ ՉԵՆ ՎԱՐՎՈՒՄ

**Հայաստանի ու Արցախի շուրջ ստեղծված իրավիճակի վերաբերյալ «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է «Արաբո» ջոկատի հրամանատար, ազատամարտիկ Մանվել Եղիազարյանի հետ:**



**-Պարոն Եղիազարյան, թշնամին վերջին օրերին կրկին ակտիվացել է, պարբերաբար կրակում է Արցախի եւ Հայաստանի դիրքերի ուղղությամբ. ի՞նչ կասեք այս մասին:**

-Մենք այսօր նմանվում ենք անասունի, որի ձագին աչքի դեմը մորթում են, մի անգամ բառաչում է, հետո գլուխը թեքում ու գնում է արածելու: Նման իրավիճակում ենք մենք հայտնվել, իսկ ադրբեջանցիները կրակում են, որպեսզի հոգեբանորեն ավելի ճնշեն արցախցիներին, բայց դա չի ազդում արցախցիների վրա, արցախցիներին սպանում է Հայաստանի հասարակության, քաղաքական գործիչների անտարբերությունը: Հակառակորդը լկտիանում է, քանի որ նրան պատասխան տվող չկա, բայց եթե մենք փորձենք վրա տալ ու մի քանի հոգու պատառ-պատառ անել, ապա նրանք անմիջապես կխելոքանան: Ադրբեջանցիները շատ լավ են հասկանում, որ մեզ հաղթել չեն կարող, բայց քանի որ անվստահության, վաղի ու կապիկության մթնոլորտ են ստեղծել, իրենք էլ ուզում են անմիջապես լուծես Արցախի հարցը:

**-Արցախն արդեն 3 ամիս է, ինչ շրջափակման մեջ է, ճգնաժամը գնալով խորանում է. ի՞նչ ելքեր եք տեսնում այս իրավիճակից, ո՞ր դեպքում հակառակորդը կվերադառնա բանակցությունների դաշտ:**

-Մենք միայն մի դեպքում կկարողանանք այս հարցը լուծել՝ երբ պահանջենք, որ մեր ժողովրդի իրավունքները պաշտպանվեն. միայն այս դեպքում Ադրբեջանը կարող է բանակցությունների գալ: Քանի որ մենք ոչինչ չենք պահանջում, Ադրբեջանն իր պահանջներն է առաջ քաշում, խոսում է արեւմտյան Ադրբեջանի մասին, աշխարհն էլ այդ հիմարությունն ընդունում է, դա հիմք է համարում, ուրեմն մենք ինչ քայլի էլ դիմենք, մենք իրավացի ենք: Մենք պատերազմը տանուլ չենք տվել, ես ո՛չ այս, ո՛չ էլ նախկին իշխանությունների պաշտպանը չեմ, գիտեմ, բայց անգամ ալան-թալանից հետո մեր բանակը 44-օրյա պատերազմի ժամանակ հանգիստ կարող էր ադրբեջանցիների հարձակումը կանգնեցնել, բայց չարեցինք, որովհետեւ նախօրոք որոշված է եղել՝ Արցախը պետք է հանձնենք: Արցախը տալուց հետո Հայաստանում ներքաղաքական իրավիճակն ավելի սարսափելի է լինելու, քան այսօր է: Մեր հասարակությունն այսօր հոգնել է, չգիտի՝ այս իրավիճակում ում ապավինի: Այդպիսի քաղաքական ուժեր կամ այրեր չկան, որոնց վրա հասարակությունը հենվի: Հասարակության մեջ սերմանում են, թե ձեր պաշտպածությունը ձեր անպաշտպան լինելու մեջ է, ասում են՝ դուք ունակ չեք ձեր կնոջը կամ աղջկան պաշտպանելու, անպաշտպան եք, այսպիսի հիմար թեզ են առաջ քաշում ու իրագործում այսօր: Այնպես են անում, որ մեր հասարակությունը դառնա անորակ ու անողնաշար, ու սա հասարակությունը կուլ է տալիս:

**Պարոն Եղիազարյան, խոսում եք հասարակության անտարբերության մասին: Ըստ Ձեզ՝ ի վերջո, ինչը կստիպի, որ հասարակությունն իսկապես գիտակցի՝ հայրենիք ենք կորցնում:**

-Հասարակությունն էլ է դա զգում, բայց այսօր այնպես են խառնել, խճճել մարդկանց, որ իրականությունը մարդիկ չգիտեն: Հասարակությունը ոտքի կկանգնի միայն այն դեպքում, երբ որեւէ անհատ, անձ ձգող ուժ հանդիսանա եւ հանի մարդկանց թմբիրից: Հիմա սթափ մարդիկ անհանգստացած են իրենց ապագայի համար, իրենց երեխաների համար:

**-Ինչպես Դուք ասացիք, մեր բանակն ի վիճակի էր 44-օրյա պատերազմի ժամանակ կասեցնել թշնամու հարձակումները, սակայն նախապես որոշված է եղել, որ պետք է հանձնեն տարածքներ: Ո՞վ է նման որոշում կայացրել՝ Հայաստանի իշխանություննե՞րը, թե՞ արտաքին ճնշում է եղել:**

-Ի՞նչ ասել է արտաքին ճնշում. եթե ճնշում կար, ինչո՞ւ էին պատերազմում, եթե ճնշում էին, հրաժարական տայիք: Ոչ մեկը իրավունք չունի ազգի հաղթանակը նվիրել ուրիշին. նիկոլանման մարդիկ բոլոր ազգերի մեջ կան. ո՞վ նրան գտավ, ո՞վ նրան բերեց: Նիկոլին դիտավորյալ են բերել, որ Արցախը տրվի, եւ այսպես լուծվի Արցախի ճակատագիրը:

*Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ*

ԼՈՒՐԵՐ

## ՆՈՐ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ադրբեջանի եւ Արցախի ներկայացուցիչների միջեւ հանդիպումներ կարող են տեղի ունենալ ՌԴ խաղաղապահների միջնորդությամբ նույն վայրում հումանիտար, ենթակառուցվածքային, տեխնիկական հարցերի շուրջ, առանց դրանց անհարկի քաղաքականացման. ասված է Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարարության հայտարարության մեջ. «Ի պատասխան Ադրբեջանի եւ Արցախի ներկայացուցիչների միջեւ հանդիպում անցկացնելու մասին Ադրբեջանի Հանրապետության նախագահի աշխատակազմի առաջարկի՝ հայտնում ենք, որ Արցախի Հանրապետությունը հավատարիմ է նախկինում հայտնած իր դիրքորոշմանն առ այն, որ նման հանդիպումներ կարող են տեղի ունենալ ՌԴ խաղաղապահների միջնորդությամբ նույն վայրում, ինչպես ս.թ. մարտի 1-ին, հումանիտար, ենթակառուցվածքային, տեխնիկական հարցերի շուրջ, առանց դրանց անհարկի քաղաքականացման:

Միեւնույն ժամանակ, հայտնում ենք, որ Լաչինի միջանցքի փակ լինելն ու հումանիտար ճգնաժամի շարունակումն անընդունելի են եւ ոչ մի կերպ չեն նպաստում բանակցային բարենպաստ մթնոլորտի ձեւավորմանը: Համոզված ենք, որ Ադրբեջանը պետք է պատշաճ կերպով իրականացնի ինչպես 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությամբ ստանձնած պարտավորությունները, այնպես էլ Արդարադատության միջազգային դատարանի որոշման պահանջները՝ զերծ մնալով ուժի կամ ուժի սպառնալիքի կիրառումից եւ միակողմանի, առավելապաշտական մոտեցումներից: Այդ դեպքում միայն նպաստավոր պայմաններ կստեղծվեն հետագա քննարկումների համար:

Ինչ վերաբերում է ադրբեջանաղարաբաղյան հակամարտության կարգավորման քաղաքական հարցերին, ապա հիշեցնենք, որ Արցախը հավատարիմ է հակամարտության համապարփակ կարգավորմանն ուղղված բանակցություններին, որոնք պետք է տեղի ունենան միջազգայնորեն ճանաչված եւ հաստատված ձեւաչափով՝ կողմերի հավասար իրավունքների եւ ստանձնած պարտավորությունների կատարման միջազգային երաշխիքների առկայության պայմաններում»:

## ՔՊ–ԱԿԱՆՆԵՐԸ ԿԳՈՐԾՈՒՂՎԵՆ

ԱԺ նախագահի որոշմամբ՝ ՔՊ խմբակցության պատգամավորներ Լիլիթ Մինասյանը եւ Լենա Նազարյանը մարտի 15-17-ը կգործուղվեն Սանկտ Պետերբուրգ (Ռուսաստանի Դաշնություն): ArmLur.am-ը տեղեկացավ, որ պատգամավորները Սանկտ Պետերբուրգում կմասնակցեն ԱՊՀ երիտասարդական միջխորհրդարանական վեհաժողովի 20-րդ նիստի աշխատանքներին: Պատգամավորների գործուղման հետ կապված օրապահիկի եւ ճանապարհածախսի վճարումը կկատարվի պետական բյուջեով Ազգային ժողովին այդ նպատակի համար հատկացված միջոցների հաշվին, իսկ գիշերավարձի վճարումը կատարում է ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողովը:

*ՔՐԻՍՏԻՆԵ ՄՈՒՇԵՂՅԱՆ*

## ՎՐԴՈՎՎԵԼ Է ԵՎ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԱՐՁԱԳԱՆՔԵԼ



«Ժողովուրդ» օրաթերթը օրեր առաջ գրել էր, որ ԱԺ փոխնախագահ Հակոբ Արշակյանը մարտի 8-ի կապակցությամբ ՔՊ-ական կանանց երկու շոկոլադե չուպաչուպս է նվիրել:

Գրել էինք, որ Հակոբ Արշակյանի այս քայլը ծաղրի առարկա է դարձել ՔՊ-ում, իշխող ֆրակցիայի կանանցից ոմանք անգամ դեն են նետել Արշակյանի նվիրած չուպաչուպսները՝ համարելով դա անարգանք իրենց նկատմամբ:

ԱԺ փոխնախագահը, պարզվում է, վրդովվել է մեր այս հրապարակումից եւ որոշել է անուղղակի արձագանքել մեզ՝ առանց կոնկրետացնելու.

«Գիտնականներն ասում են, որ շոկոլադը երջանկացնում եւ ժպիտներ է պարգեւում մարդկանց:

Մի՛ վախեցեք դեղին մամուլից, իրար նվիրե՛ք հայկական շոկոլադ»,- գրել է Արշակյանը:

Արշակյանի այս գրառումն ավելի ծանր վիճակի մեջ է դրել իրեն:

Ֆեյսբուքյան օգտատերերը շարունակել են ծաղրել Արշակյանին՝ գրելով.

«Հետաքրքիր է՝ դուք, շոկոլադ ուտելուց ու դեղին մամուլ կարդալուց բացի, ուրիշ գործ չունե՞ք անելու: Ամբողջ սահմանի երկայնքով կուտակումներ կան թշնամու կողմից, Արցախը բլոկադայի մեջ է, սահմանամերձ բնակավայրերում մարդիկ տագնապով սպասում են պատերազմի վերսկսման, իսկ ԱԺ փոխնախագահը՝ թե բա շոկոլադ ու դեղին մամուլ... »:

«Ինչու՞ մտածեն. տակները՝ չոր, փորները՝ կուշտ: Մտածելու համար ուղեղ է պետք»,- արձագանքել է մյուս օգտատերը:

«Լավ է շոկոլադ, քան չուպաչուպս»,- արձագանքել են ֆեյսբուքյան օգտատերերը Արշակյանի գրառմանը:

Հակոբ Արշակյանին իր իսկ գրառման ներքո օգնության են հասել ՔՊ-ական կանայք՝ Մարինե Խաչատրյանը եւ Հասմիկ Հակոբյանը, շնորհակալություն են հայտնել Արշակյանին համեղ նվերի համար: Զարուհի Բաթոյանը գրել է.

«Մամաս շատ հավանեց, ասում է՝ կարող ես կրկնել, Արշակյան ջան»: Բաթոյանի սոցապնախարար անցյալն է հիշել ֆեյսբուքյան օգտատեր Հակոբ Արշակյանը.

«Նախշուն ջան, պատվարժանս, կարգ ու թոշակ չստացած քաղաքացին ինչպե՞ս հասնի այդ շոկոլադին, երբ ունի լիքը մուծումներ եւ պարտքեր մշտապես...»:

Կարճ ասած, անգամ իշխանության երբեմնի սիրելի «Ֆեյսբուք»-ում քննադատությունն ավելի շատ է: Եւ, հետեւաբար, հարց է առաջանում՝ մեզ արձագանքելու իմաստը՞...

## ՕՐԵՆՔ Է ԸՆԴՈՒՆԵԼ

Ռուսաստանի Դաշնության Պետդումայի երեքշաբթի լիագումար նիստում երրորդ՝ եզրափակիչ ընթերցմամբ հատուկ ռազմական գործողության բոլոր մասնակիցներին վարկաբեկելու համար քրեական պատասխանատվության մասին օրենք է ընդունել. հաղորդում է ՏԱՍՍ-ը: Այժմ պատասխանատվությունը նախատեսված է միայն այն հրապարակային գործողությունների համար, որոնք ուղղված են արտասահմանում Ռուսաստանի Դաշնության ԶՈւ օգտագործումը վարկաբեկելուն: Փոփոխությունները ՌԴ ՔՕ 280.3 հոդվածի գործողությունը տարածում են նաեւ կամավորական կազմավորումների վրա: Գործող խմբագրությունում անձին վարչական պատասխանատվության ենթարկելուց հետո մեկ տարվա ընթացքում կատարված հանցագործության համար առավելագույնը սպառնում է մինչեւ երեք տարվա ազատազրկում: Դումայի ընդունած օրենքն այդ ժամկետը մեծացնում է մինչեւ հինգ տարվա ազատազրկում: Նաեւ ավելանում է մինչեւ յոթ տարվա ազատազրկում առավելագույն հնարավոր պատիժը այն դեպքում, երբ գործողությունները հանգեցրել են մահվան կամ զանգվածային անկարգությունների: Այժմ այն սահմանված է մինչեւ 5 տարվա ազատազրկման մակարդակում: Օրենքը նաեւ կամավորական կազմավորումների վրա է տարածում Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքի 207.3-րդ հոդվածի գործողությունը՝ Ռուսաստանի Դաշնության Զինված ուժերի մասին կեղծիքների համար պատասխանատվության մասին: Այժմ ՌԴ զինված ուժերի մասին ակնհայտ կեղծ տեղեկատվության հրապարակային տարածման համար, որը հանգեցրել է ծանր հետեւանքների, սպառնում է մինչեւ 15 տարվա ազատազրկում: Դումայի ընդունած օրենքը նախատեսում է, որ նման պատասխանատվություն կկիրառվի նաեւ կամավորական կազմավորումների մասին ֆեյքերի տարածման դեպքում:

## ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏԸ ԼՐԱՑԱՎ

Երեկ լրացավ դատավորների համար տրված այն վերջնաժամկետը, որը տրված էր նրանց՝ ՀՀ բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամ առաջադրվելու համար: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ դատական համակարգում ներքին քննարկում է եղել, եւ այսօր պարզ կլինի, թե ովքեր են այն դատավորները, որոնք պատրաստվում են իրենց թեկնածությունը առաջադրել եւ գնալ ԲԴԽ՝ դատավոր աշխատելու: Նշենք, որ մարտի 9-ին ԲԴԽ-ն ծանուցումներ էր ուղարկել Հայաստանում գործող բոլոր դատարաններին՝ առաջարկելով ԲԴԽ դատավոր անդամի թեկնածություններ առաջարկել: Հիշեցնենք՝ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ ապրիլի 9-ին ՀՀ բարձրագույն դատական խորհրդի երկու դատավոր անդամները կլքեն իրենց պաշտոնները: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ 2023 թվականի ապրիլի 9-ին լրանում է Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամներ Սերգեյ Չիչոյանի եւ Անի Մխիթարյանի պաշտոնավարման ժամկետը, ուստի նրանք կհեռանան ԲԴԽ-ից: Նկատենք, որ Ստեփան Միքայելյանի պաշտոնավարման ժամկետը եւս լրանում է ապրիլին, սակայն նա նախընտրեց ավելի շուտ դիմում գրել եւ հեռանալ ԲԴԽ անդամի բարձր պաշտոնից: Այսպիսով, ԲԴԽ գիտնական անդամների բոլոր թափուր տեղերն այսօրվա դրությամբ լրացված են, իսկ դատավորների համար նոր պայքարի դաշտ է բացվում:

ՄԱՄՈՒԼԻ ԱՍՈՒԼԻՍ

# «ԼՂ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՆ Է»

**ԼՂ անվտանգության երաշխավորը Ռուսաստանի Դաշնությունն է, եւ նա պետք է կատարի այդ դերակատարումը. այս մասին իր մամուլի ասուլիսի ժամանակ նշեց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:**



Հարցին, թե Արցախի դեմ հնարավոր էսկալացիայի դեպքում արդյոք Հայաստանն ապահովելու է Արցախի անվտանգությունը, արդյոք Հայաստանը շարունակում է մնալ Արցախի անվտանգության երաշխավորը, Փաշինյանը պատասխանեց. «Ինչո՞ւ ես ստորագրեցի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունը. պարզ պատճառով՝ ընկալելով, որ այդ իրավիճակում Հայաստանը չի կարող լինել ԼՂ անվտանգության լիարժեք երաշխավոր, հետեւաբար պետք էր ստեղծել մի համակարգ, որը երաշխավորեն ԼՂ անվտանգությունը:

Համաձայն եռակողմ հայտարարության եւ դրանից հետո ՌԴ Դաշնային խորհրդի կայացրած որոշման, որով նախագահին թույլ է տալիս զորքեր ուղարկել ԼՂ, այս ամենով արձանագրվել է, որ ԼՂ անվտանգության երաշխավորը Ռուսաստանն է, ոչ թե այն պատճառով, որ Հայաստանը հրաժարվում է դրանից, այլ այն պատճառով, որ Հայաստանը, ցավոք, 44-օրյա պատերազմում պարտության պատճառով չի կարող լիարժեք կատարել այդ գործառույթը: Հետեւաբար, այս բոլոր փաստարկները ի մի բերելով, պետք է արձանագրել, որ ԼՂ անվտանգության երաշխավորը ՌԴ-ն է:

Մյուս կողմից՝ ԼՂ-ում կա պաշտպանության բանակ, որը Ադրբեջանը փորձում է ներկայացնել որպես Հայաստանի բանակ: Հայաստանը բանակ չունի ԼՂ-ում»:

Նա նկատեց, որ Ադրբեջանը նաեւ փորձում է հիմնավորել, որ Արցախի ՊԲ-ն պետք է լուծարվի, գոյություն չունենա. «Եթե ցեղասպանության եւ էթնիկ զտման ակնհայտ վտանգ չլինի ԼՂ հայության համար, առնվազն այդ մասշտաբով բանակ պահելու կարիք ԼՂ-ն չի ունենա: Այս նեղ վիճակում ԼՂ-ում միլիարդներ են ծախսում այդ բանակը պահելու համար : ԼՂ ՊԲ-ի գոյությունը ամենամեծ ապացույցն է ցեղասպանության եւ էթնիկ զտումների նախապատրաստությունների»,-հայտարարեց վարչապետը:

«Արցախի նախագահի հետ մենք ամենօրյա շփումների մեջ ենք, ընդ որում՝ հիմնականում ես եմ նախաձեռնողը. ես զանգում եմ, հարցնում եմ՝ ինչ կա, ինչ չկա, խանութներում ինչ կա»:

Հարցին՝ կան արդյոք իրենց մեջ տարաձայնություններ, մասնավորապես՝ ռուս խաղաղապահների, Ռուսաստանի ներգրավվածության հարցերում, Փաշինյանը պատասխանեց. «Ռուս խաղաղապահների վերաբերյալ հարցը այն դեպքն է, երբ տեսակետների ոչ մի տարբերություն չունենք: Իսկ մնացած հարցերով, արդյոք կա՞ն տարբեր տեսակետներ: Իհարկե կան, այն բանի բերումով, որ ինքը ԼՂ նախագահն է, ես էլ Հայաստանի վարչապետն եմ:

Իսկ ի՞նչն է այդտեղ վախենալու. կա բանավեճ, կա խոսակցություն, կա քննարկում, եւ ես հարգում եմ ԼՂ նախագահի եւ ԼՂ ԱԺ-ի, կառավարության, քաղաքացիական հասարակության, բոլորի կարծիքը: Ինձ իրավունք եմ վերապահում նաեւ դիտարկումներ անել այդ կարծիքների վերաբերյալ: Կա՞ արդյոք բանավեճ, քննարկում. այո՛, կա: Այդ բանավեճն ազդո՞ւմ է արդյոք մեր անձնական եւ աշխատանքային հարաբերությունների վրա. եթե ազդում է, միայն՝ դրական, որովհետեւ անկեղծության, բացության, փոխադարձ հարգանքի մթնոլորտը ամենակարեւոր բանն է»,-ասաց նա:

ՕՐՎԱ ԽԾԱՆԿԱՐ

## ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄ

ՀՀ արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանի հրամանով՝ հաստատվել է Բրյուսովի համալսարանի ժամանակավոր խորհրդի կազմը. տեղեկացնում են ՀՀ ԱՆ-ից:

«Հիմք ընդունելով «Հիմնադրամների մասին» օրենքի 23-րդ հոդվածի 7-րդ մասը եւ Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 704-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետը՝ ՀՀ արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանի՝ մարտի 9-ի N 115-Ա հրամանով՝ հաստատվել է «Վալերի Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի ժամանակավոր խորհուրդը, որը կազմված է 3 անդամից՝

1) կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյան,

2) արդարադատության նախարարի տեղակալ Արմենուհի Հարությունյան,

3) վարչապետի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Ջարուհի Մաթեւոսյան»,-ասված է հրամանում:

## ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը Դատախազության 105-ամյակի միջոցառումների շրջանակում մարտի 13-ին հանդիպել է Երեւանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի երկրորդ եւ երրորդ կուրսերի ուսանողներին, պատասխանել է նրանց հարցերին:

Ուսանողների հետ զրույցի ընթացքում քննարկվել են դատախազի կերպարը, դատախազական գործունեության ընթացքում ի հայտ եկող մարտահրավերները, դատախազական գործունեության վերաբերյալ հանրային ընկալումները եւ այլ հարցեր:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Անահիտ Մանասյանը ուսանողների հետ խոսել է Դատախազությունում իրականացվող բարեփոխումներից՝ ուղղված անհրաժեշտ հմտություններ ունեցող բարեվարք, արդարամիտ եւ օրինակելի դատախազներ ունենալուն, ինչպես նաեւ անդրադարձ է կատարել Դատախազության 105-ամյակի շրջանակում նախատեսվող միջոցառումներին՝ գիտաժողովներին, գիտական բանավեճերին, դպրոցներ նախատեսվող այցերին:

## ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ՝ ԱՐՑԱԽՈՒՄ

Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանը մարտի 14-ին ստորագրել է մի շարք հրամանագրեր: Համաձայն հրամանագրերի՝ Սամվել Արծրունու Ավետիսյանն ազատվել է Արցախի Հանրապետության առողջապահության նախարարի պաշտոնից՝ իր

դիմումի համաձայն: Առողջապահության նախարար է նշանակվել Վարդան Նիկոլայի Թադեւոսյանը:

ՉԱՐԱՇԱՀՈՒՄՆԵՐ

# ԿԼԻՆԻԿԱՅԻ ՏՆՕՐԵՆԸ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵՑ

**Կորոնավիրուսի ժամանակ ենթադրյալ չարաշահումների գործով կալանավորվել է «Մեդլայն Կլինիկ» ՍՊԸ-ի փոխտնօրեն Լ.Հ.-ն: Տեղեկությունը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում հաստատեց Հակակոռուպցիոն կոմիտեի մամուլի քարտուղար Մարինա Օհանջանյանը:**



«Մեդլայն Կլինիկ» ՍՊԸ-ի փոխտնօրեն Լիլիա Հակոբյանը կորոնավիրուսի ժամանակ եղել է հիվանդանոցի ավագ բուժքույրը: Նշենք, որ կորոնավիրուսի ժամանակ ենթադրյալ չարաշահումների գործով կալանավորված է նաեւ «Մեդլայն Կլինիկ» ՍՊԸ-ի տնօրեն Բաբկեն Շահումյանը, առողջապահության նախկին փոխնախարար, Երեւանի փոխքաղաքապետ Գեւորգ Սիմոնյանը: Տնային կալանքի տակ է «Թոքաբանության ազգային կենտրոն»-ի դեղակայուն բաժանմունքի վարիչ Լ. Ե.-ն: Ըստ քրեական վարույթով ձեռք բերված տվյալների՝ Գեւորգ Սիմոնյանը, 2020-2022թթ. ընթացքում զբաղեցնելով ՀՀ առողջապահության նախարարի տեղակալի պաշտոնը, անձնական շահագրգռվածությունից ելնելով, չի կատարել իր ծառայողական պարտականությունները, որի հետեւանքով էական վնաս է պատճառվել պետության օրինական շահերին: Մասնավորապես, ըստ պաշտոնական հաղորդագրության՝ «ՀՀ-ում նոր կորոնավիրուսային վարակի (Covid-19) կանխարգելման, վերահսկման, բուժման այլ համալիր միջոցառումների» իրականացման ծրագրով ՀՀ կառավարությունը հատկացրել է ավելի քան 26 մլրդ ՀՀ դրամ, որն ամբողջությամբ ֆինանսավորվել է ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից: Հիշյալ ծրագրի շրջանակում, ՀՀ առողջապահության նախարարի 2020թ. հրամանով, հաստատվել է կորոնավիրուսային հիվանդության՝ «COVID-19»-ի ախտորոշման եւ բուժման դիմաց պետական բյուջեից փոխհատուցում ստացող՝ բժշկական օգնություն եւ սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպությունների ցանկը, որում ներառվել է նաեւ «Մեդլայն Կլինիկ» ՍՊ ընկերությունը: Առողջապահության նախարարի հրամանի համաձայն՝ նախարարի տեղակալ Գ. Սիմոնյանին հանձնարարվել է իրականացնել կորոնավիրուսային հիվանդության համար անհրաժեշտ բժշկական օգնության եւ սպասարկման ծառայությունների՝ ներառյալ ֆինանսավորման համակարգումը, իսկ ՀՀ ԱՆ թոքաբանության եւ տուբերկուլոզի գծով խորհրդատու, ՀՀ ԱՆ «Թոքաբանության ազգային կենտրոն» ՓԲ ընկերության դեղակայուն բաժանմունքի վարիչ Լ. Ե.-ն նշանակվել է COVID 19 հիվանդությամբ հաստատված պացիենտների տեսակավորման եւ հիվանդանոցային պայմաններում բուժում ստացող եւ դուրսգրման ենթակա պացիենտների տրիաժի (Դուրսգրման տրիաժ խմբերի) պատասխանատու: Սակայն կալանավորված Բ. Շ.-ի կազմակերպմամբ՝ բժշկական կազմակերպության բժիշկներից առնվազն 8-ը սոմատիկ բաժանմունքում 2020թ. հուլիսից 2021թ. դեկտեմբերն ընկած ժամանակահատվածում ստացիոնար բուժում ստացած 385 պացիենտի հիվանդության պատմագրերում կեղծ տեղեկություններ են ներառել, թե, իբր, հիշյալ պացիենտները բուժում են ստացել վերակենդանացման բաժանմունքում, որի վերաբերյալ այնուհետեւ կեղծ հաշվետվություններ են ներկայացրել ՀՀ առողջապահության նախարարություն: Ներկայացված կեղծ հաշվետվությունների հիման վրա՝ «ՀՀ-ում նոր կորոնավիրուսային վարակի (Covid-19) կանխարգելման, վերահսկման, բուժման այլ համալիր միջոցառումների» ծրագրի ֆինանսական միջոցներից «Մեդլայն Կլինիկ» ՍՊ ընկերությանը անհիմն, փաստացի չմատուցված ծառայությունների դիմաց փոխանցվել է առանձնապես խոշոր չափերի՝ 119.005.000 ՀՀ դրամ: Առողջապահության նախարարի տեղակալ Գ. Սիմոնյանը, նախարարի հրամանով պատասխանատու լինելով վերը նշված ծրագրի ֆինանսավորման համակարգման համար, ինչպես նաեւ պարտավոր լինելով իրականացնել կորոնավիրուսային հիվանդությամբ պացիենտների դուրսգրման գործառույթների նկատմամբ հսկողություն, «Մեդլայն կլինիկ» ՍՊ ընկերության հիմնադիր տնօրեն Բ. Շ.-ի հետ քավորսանիկական, ինչպես նաեւ նախկինում ունեցած գործնական հարաբերությունները չվատթարացնելու անձնական շահագրգռվածությունից ելնելով, դիտավորությամբ չի կատարել իր վրա դրված պարտականությունները, այն է՝ հսկողություն չի իրականացրել դուրսգրման տրիաժ խմբի պատասխանատու Լ. Ե.-ի եւ խմբի անդամների նկատմամբ, որի հետեւանքով հիշյալ խմբի անդամները, այցելելով «Մեդլայն կլինիկ» ՍՊ ընկերություն, ստացիոնար բուժում ստացող անձանց հիվանդության պատմագրերում առկա կեղծ տվյալները չեն համադրել բուժառուների փաստացի առողջական վիճակի հետ եւ չեն արձանագրել այդ անհամապատասխանությունները:

ԼՈՒՐԵՐ

## «ՍՈՒՐՄԱԼՈՒ»-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԵՑՎԵԼ Է

ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական եւ հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի՝ 2023 թվականի մարտի 3-ի հանձնարարագրի հիման վրա՝ Տեսչական մարմնի մասնագետների կողմից հրդեհատեխնիկական հետազոտություն է իրականացվել ՀՀ քաղաք Երեւան, Արշակունյաց 15 հասցեում գտնվող «Երեւանի պահածոների գործարան» («Սուրմալու» տոնավաճառ) ՓԲ ընկերությունում՝ տեխնիկական եւ հրդեհային անվտանգության պահանջների պահպանման նկատմամբ. տեղեկացնում են ՔՏՀԱՏՄ-ից:

«Իրականացված հետազոտությունների արդյունքում նշված օբյեկտում հայտնաբերվել են տեխնիկական եւ հրդեհային անվտանգության նորմատիվ փաստաթղթերի պահանջների բազմաթիվ խախտումներ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ ընկերության կողմից նշված հասցեում գտնվող շենքերը եւ շինությունները շահագործվում են հրդեհային անվտանգության նորմատիվ փաստաթղթերի պահանջների բազմաթիվ թերություններով եւ խախտումներով, որոնք կարող են անմիջականորեն եւ ուղղակի սպառնալիք ստեղծել հրդեհների առաջացման եւ մարդկանց անվտանգության համար, Տեսչական մարմնի ղեկավարի կողմից կայացվել է ՀՀ քաղաք Երեւան, Արշակունյաց 15 հասցեում գործունեություն ծավալող «Երեւանի պահածոների գործարան» փակ բաժնետիրական ընկերության աշխատանքներն ամբողջությամբ դադարեցնելու մասին որոշում մինչեւ հայտնաբերված խախտումների վերացումը»,- ասված է հաղորդագրությունում:

## ՀԵՐԹԱԿԱՆ ՄԵՂԱԴՐԱՆՔ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Վարոս Շահմուրադյանին մեղադրանք է առաջադրվել, որ նա, հաշվառված լինելով ՀՀ ՊՆ Զ եւ ԶՀԾ Երեւանի թիվ 2 ստորաբաժանումում՝ որպես պահեստազորային, հրաժարվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թ. մարտի 10-ի որոշմամբ հայտարարված վարժական հավաքներին մասնակցելուց, 2022 թվականի մայիսի 10-ին չի ներկայացել տարածքային ստորաբաժանում՝ խախտելով «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջները, խուսափել է 2022 թվականի մայիսի 10-ից մինչեւ մայիսի 19-ը անցկացվող վարժական հավաքներից՝ այդ ծառայությունից ազատվելու՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հիմքերի բացակայության դեպքում:

*ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

ԼՈՒՐԵՐ

## ՏԵՂԱՓՈԽԵԼ ԵՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ

Մարտի 11-ին «Եղեգնաձոր» հիվանդանոցից հաղորդում է ստացվել, որ թեւի եւ թիկունքի շրջանում ծակած վերքերով իրենց մոտ է տեղափոխվել Վարդան Վարդանյանը:

Հիվանդանոցի ահազանգով ոստիկանները շտապել են դեպքի վայր ու պարզել, որ «Աղավնաձորի շուկա» կոչվող տարածքի դիմացի հատվածում վիճաբանության ժամանակ Վ. Վարդանյանին սուր կտրող-ծակող գործիքով մարմնական վնասվածքներ է պատճառել ոմն Գեղամը:

Հանգամանքները պարզվում են:

*ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

## ՄԵՂԱԴՐԱՆՔ Է ԱՌԱՋԱԴՐՎԵԼ

Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության Կոտայքի մարզի գումարտակի պարեկներից ստացված հաղորդման առթիվ 2023թ. մարտի 12-ին ՀՀ ՔԿ ԵՔՔՎ Ավան եւ Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 452-րդ հոդվածի 3-րդ մասով նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում կատարված քննչական եւ վարութային գործողությունների, այդ թվում՝ նաեւ առգրավված՝ պարեկներին ամրակցված տեսախցիկների տեսագրությունների ուսումնասիրության արդյունքում փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ 2023թ. մարտի 12-ին՝ ժամը 20:50-ի սահմաններում, Գ. Պետրոսյանը չի ենթարկվել պաշտոնատար անձինք հանդիսացող, ՀՀ ՆԳՆ պարեկային ծառայության Կոտայքի մարզի գումարտակի պարեկների օրինական պահանջներին՝ այդկերպ միջամտելով վերջիններիս ծառայողական գործունեությանը. տեղեկացնում են ՀՀ ՔԿ-ից:

Մասնավորապես, ոստիկանության աշխատակիցներին փաստաթղթերի ստուգումից հրաժարվելուն, սթափության վիճակի զննություն չանցնելուն հարկադրելու նպատակով նա սպառնացել է պարեկի նկատմամբ գործադրել նրա առողջությանը վնաս պատճառելու նպատակ հետապնդող բռնություն, ապա անտեսելով ավտոմեքենայից դուրս գալու իրեն ուղղված պահանջները՝ վարել է մեքենան եւ հեռացել նշված վայրից:

Ձեռք բերված փաստական տվյալների հիման վրա՝ վարույթն իրականացնող քննիչի կողմից հսկող դատախազին միջնորդություն է ներկայացվել՝ Գ. Պետրոսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 452-րդ հոդվածի 1-ին մասով հանրային քրեական հետապնդում հարուցելու վերաբերյալ: Միջնորդությունը բավարարվել է, եւ երեկ՝ մարտի 14-ին, վերջինիս ներկայացվել է մեղադրանք:

Գ. Պետրոսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել բացակայելու արգելքը:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ մարտի 13-ից 14-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 63 դեպք, որոնցից 4-ը՝ նախկինում կատարված:*

## ՄԱՐԶ

### ԱՐՏԱԳՆԱ ԱՇԽԱՏԱՆՔ՝ ՊԱՏԵՐԱԶՄՈՂ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Մինչ ՀՀ էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը խոսում է տնտեսական մեծ աճից, Հայաստանում ստեղծվող մեծ թվով աշխատատեղերից, Տավուշի մարզի բնակիչները, հատկապես՝ մարզի սահմանամերձ գյուղերի տղամարդիկ, աշխատանք չունենալով, արտագնա աշխատանքի են մեկնում Ուկրաինայի հետ փաստացի պատերազմի մեջ գտնվող Ռուսաստան: Նախկինում սահմանամերձ գյուղերի երիտասարդները հիմնականում պայմանագրային զինծառայող էին դառնում՝ մնալով հայրենի գյուղում: Սակայն ներկայումս պայմանագրային զինծառայողի կարգավիճակը Ադրբեջանին սահմանակից բնակավայրերի տղամարդկանց չի հրապուրում, որովհետեւ պայմանագրային զինծառայողների աշխատավարձերը բարձր չեն, բանակում կարգապահությունը բարձր չէ, 2020թ-ին Արցախում տեղի ունեցած պատերազմում պարտությունից հետո զինծառայողների կարգավիճակը հասարակության մեջ մեծ հարգանք չի առաջացնում: Տավուշից արտագնա աշխատանքի մեկնողները Ռուսաստանում կատարում են բնակելի շենքերի տարածքների, արտադրական եւ այլ կառույցների ներսի նորոգման, հարդարման աշխատանքներ, տարբեր կոնստրուկցիաների հավաքում, իսկ ամռան ամիսներին՝ ճանապարհների նորոգում, ասֆալտապատում: Արտագնա աշխատանքի մեկնածներից շատերը Ռուսաստանի քաղաքներում տաքսի են քշում: Տավուշցի տղամարդկանց Ռուսաստանի Դաշնություն հրավիրող գործատուները հիմնականում հայեր են, նրանք հաճախ երկվոր բանվորներին ապահովում են կացարանով, սննդով, ծխախոտով: Արտագնա աշխատանքի մեկնողների ամսական աշխատավարձը սովորաբար լինում է 350- 400 հազար դրամ եւ ավելի բարձր:

### ԻՆՔՆԱՎՆԱՍՈՒՄ Է ԱՐԵԼ

Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում քննվող քրեական գործերի մեջ քիչ չեն զինվորական ծառայության պարտականությունները կատարելուց հրաժարվելու դեպքեր: Ընդ որում՝ զինվորական պարտականությունները կատարել հրաժարվածների մեջ կան ինչպես ժամկետային, այնպես էլ պայմանագրային զինծառայողներ: Երբեմն զինծառայողները կատարում են ինքնավնասումներ: Կարեն Սարգսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով ՀՀ ՊՆ Ն զորամասի ժամկետային զինծառայող, 2022թ. հուլիսի 27-ին՝ ժամը 13:00-ի սահմաններում, իրեն պատկանող եղունգկտրիչի միջոցով կրծքավանդակի եւ նախաբազկի շրջանում կատարել է անդամախեղում՝ իրեն պատճառելով առողջության թեթեւ վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածքներ, որը հանգեցրել է զինվորական ծառայության կամ դրա առանձին պարտականությունների կատարումը ժամանակավորապես դադարեցնելուն: Կ. Սարգսյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 528 հոդվածի 1-ին մասով: Դատարանում սույն մեղադրանքը պաշտպանում է Լոռու կայազորի զինվորական դատախազությունը: Սույն քրեական գործով Տավուշի մազի առաջին ատյանի դատարանի Իջեւան քաղաքի նստավայրում նիստեր են կայանում:

*ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ*
*Տավուշ*

## ՆՈՐ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ՝ ԶՈՒ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ» ՕՐԵՆՔՈՒՄ

# Ո՞Ր ԴԵՊՔՈՒՄ ԿԵՆԹԱՐԿՎԵՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ

**ՀՀ կառավարությունը ներկայացնում է ««Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը:**



Փաթեթով փոփոխություններ են առաջարկվում պարզեւատրման, նաեւ կարգապահական պատասխանատվություն ենթարկելու կանոններում: Մասնավորապես, վարչական իրավախախտում թույլ տված զինծառայողը կարգապահական պատասխանատվության է ենթարկվում՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով սահմանված կարգով:

Մեկ այլ փոփոխությամբ՝ կարգապահական պատասխանատվության ենթակա չէ այն զինծառայողը, որը թեեւ արարք է կատարել, սակայն գործել է ծայրահեղ անհրաժեշտության վիճակում: Սույն օրենքի շրջանակներում ծայրահեղ անհրաժեշտության վիճակը մեկնաբանվում եւ կիրառվում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 34-րդ հոդվածում սահմանված իմաստով եւ կարգով: Նաեւ կարգապահական պատասխանատվության ենթակա չէ այն զինծառայողը, որը թեեւ արարք է կատարել, սակայն գործել է անհրաժեշտ պաշտպանության վիճակում:

Մեկ այլ փոփոխությամբ ընդգծվում է, որ զինծառայողին նույն կարգապահական իրավախախտման համար մեկից ավելի կարգապահական տույժ չի կարող տրվել: Մեկնաբանվել է նաեւ, թե ինչու է ահրաժեշտություն առաջացել ընդունել նոր նախագիծը եւ փոփոխություններ կատարել:

Մասնավորապես, ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագրքի (այսուհետ՝ կանոնագիրք) կիրառման շրջանակներում ակնհայտ է դարձել, որ կանոնագրքի հատուկ մասում կարգապահական իրավախախտումների համար սահմանված կարգապահական տույժերի ցանկում կանոնագրքի 23-րդ հոդվածում նախատեսված տույժերի տեսակների ոչ ամբողջական ընդգրկումը խնդիրներ է առաջացրել կարգապահական իրավախախտումների դիմաց պատշաճ ներգործություն ապահովելու գործընթացում: Կանոնագրքի 27-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ սպաների կողմից կատարված կարգապահական իրավախախտումների պարագայում պարտադիր նշանակվում է ծառայողական քննություն: Այս դրույթը բավականին ծանրաբեռնում էր տարբեր տեսակի ոչ էական բնույթի տարբեր իրավախախտումների համար սպայական կազմի զինծառայողներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործընթացը, ինչպես նաեւ առավել պարզեցված կարգով կարգապահական իրավախախտման դեպքը քննելու եւ կարգապահական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգի բացակայությունը կրկին անհամաչափ ծանրաբեռնում էր զորային օղակի գործունեությունը:

Դրա փոխարեն, որպես ծառայողական քննության նշանակման պարտադիր դեպքեր, նպատակահարմար է սահմանել զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելու, մարտական հերթապահության կրման կամ սպառազինության եւ ռազմական տեխնիկայի շահագործման կանոնների խախտման, մարմնական վնասվածք կամ նյութական վնաս պատճառելու դեպքերը՝ որպես զինվորական ծառայության հարաբերությունների վրա առավել բացասական ազդեցություն ունեցող իրավախախտումներ:

Բացի այդ, անհրաժեշտություն է առաջացել օրենքում հստակեցնել զորահավաքային զորակոչի միջոցով զորահավաքային զինվորական ծառայություն անցնող կամ վարժական հավաքների կանչված զինծառայողների նկատմամբ խրախուսանքներ եւ կարգապահական տույժեր կիրառելու շրջանակը, կարգապահական տույժերի տեսակների ցանկում աշխատանքի արտահերթ վերակարգի փոխարեն նախատեսել զինծառայողի ամսական պաշտոնային դրույքաչափից պահում մինչեւ 30 տոկոս չափով եւ մինչեւ երեք ամիս ժամկետով, հստակեցնել կարգապահական տույժերի ընտրության կարգը եւ կարգապահական տույժերի բողոքարկման ընթացակարգը, կանոնագրքում իրականացնել մի շարք այլ բնույթի հստակեցումներ եւ կարգավորումներ:

*ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*

## ՉԻՆԱՍՏԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐԵԼ Է

# ԿՏՐԱՄԱԴՐԵՆ ՎԻԶԱՆԵՐ ԲՈԼՈՐ ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻՆ

**Չինաստանը հայտարարել է, որ COVID-19-ի համավարակից հետո առաջին անգամ սահմանները կբացի օտարերկրյա զբոսաշրջիկների համար: Մարտի 15-ից Չինաստանը կվերականգնի բոլոր տեսակի վիզաների տրամադրումը:**

Ըստ հաղորդագրության՝ զբոսաշրջության ոլորտի խթանումը պետք է օգնի վերակենդանացնել 17 տրիլիոն դոլարի տնտեսությունը, որն անցյալ տարի ցուցաբերել էր վերջին գրեթե կես դարում աճի ամենադանդաղ տեմպերից մեկը:

Ըստ Չինաստանի արտգործնախարարության հայտարարության՝ երկրի այն հատվածները, որտեղ այցելելու համար համավարակից առաջ վիզա չէր պահանջվում, դարձյալ կանցնեն մուտքի անայցագիր ռեժիմի: Սա կներառի Չինաստանի հարավում գտնվող զբոսաշրջային Հայնան կղզին եւ Շանհայի նավահանգստով անցնող զբոսաշրջային նավերը:

Կվերականգնվի նաեւ անայցագիր մուտքը հարավային Գուանդուն նահանգ Հոնկոնգից եւ Մակաոյից օտարերկրացիների կազմակերպված խմբերի համար:

Չինաստանի արտգործնախարարությունում նաեւ նշել են, որ մինչեւ 2020 թ.-ի մարտի 28-ը վիզա ստացած այն օտարերկրացիները, որոնց վիզաների գործողության ժամկետը չի անցել, նույնպես կարող են մուտք գործել Չինաստան:

Չինաստանի իշխանությունները կորոնավիրուսի համավարակի պատճառով 2020թ. մարտի 28-ից ժամանակավորապես արգելել էին օտարերկրյա քաղաքացիների մուտքը երկիր: 2022թ. դեկտեմբերի սկզբին Չինաստանը մեղմացրել էր կորոնավիրուսով պայմանավորված խիստ սահմանափակումները, որից հետո երկրում վիրուսի լայն տարածում էր սկսվել: 2023թ. հունվարից մեղմացվել էին նաեւ կարանտինային սահմանափակումները երկիր մուտք գործողների համար:

Չինաստանի իշխանություններն այդ ժամանակ նաեւ հայտարարել էին, որ փուլ առ փուլ կվերականգնեն Չինաստանից ուղեւորությունները դեպի այլ երկրներ:

*● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 14 ճՏՊ. 1 մարդ զոհվել է, 21-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Աճուրդի կազմակերպման եւ անցկացման մասին**

2023թ. Մարտի 30-ին, ժամը 12:30 ք.Երեւան, Արշակունյաց պողոտա 5, 311 սենյակ հասցեում նշանակված է Սերժիկ Մկրտչյանի սնանկության գործով պարտապանին սեփականության իրավունքով պատկանող, համատեղ ամուսնական կյանքում ձեռք բերված գույքի բաց դասական եղանակով աճուրդ-վաճառքը հետեւյալ լոտով.

Լոտ 8. ՀՀ, ք. Երեւան, Շենգավիթ համայնք, Ն. Շենգավիթ, 11 փող, թիվ 1 հասցեյում գտնվող անշարժ գույք /սեփականության վկայական՝ 1516030/: Մեկնարկային գինը՝270,600,000 (Երկու հարյուր յոթանասուն միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ: /Գույքի մանրամասն նկարագրությունը ներկայացված է վաճառքի ծրագում/: Գույքն իրենից ներկայացնում է մեկ հարկանի Ջերմաքարշի կայան որը տեղակայված է 9,000 ք.մ. հողամասի վրա /հողամասը ըստ թիվ 1516030 սեփականության վկայականի զբաղեցնում է 9,000 քմ մակերես: Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության:/: Շենքի կառուցման տարեթիվը՝ 1955թ, տուֆից եւ երկաթբետոնից կառույց է, ներքին բարձրությունը 4.7 մ, տանիքը՝ թիթեղ, մուտքի դարպասը մետաղյա, պատուհանները փայտյա /առկա են ճաղավանդակներ/, նեքին մակերեսը 186,7 քմ /ըստ սեփ վկայականի մակերեսը՝215 ք.մ. է/, կոմունիկացիաներ՝ էլ. մատակարարում, ջրամատակարարում, կոյուղի: Շինությունը գտնվում է միջին վիճակում եւ չի օգտագործվում իր նշանակությանը համապատասխան: Գնահատման վեց բալանոց համակարգում ներքին հարդարման ցուցանիշի համապատասխանում է 1-ին /ամենավատ/ կատեգորիաին: Շենք շինության շուկայական արժեքը գնահատվել է՝ 4,272,556 ՀՀ դրամ, հողամասինը՝266,310,000 ՀՀ դրամ: Ընդհանուր գույքի արժեքը կլորացված՝ 270,600,000 ՀՀ դրամ է:

Գնահատվող հողամասում առկա է եւս մեկ հին (շատ վատ վիճակում գտնվող) շինություն, որը վկայականում նշված չէ, չկա նաեւ դրա վերաբերյալ չափագրում: Այդ շինության արժեքը ներառված չէ գնահատման արդյունքներում:

Հողամասի կադաստրային արժեքը վճարված չէ, որը գնահատման պանին կազմում էր՝ 145,589,400 (Մեկ հարյուր քառասունհինգ միլիոն հինգ հարյուր ութսունինը հազար չորս հարյուր) ՀՀ դրամ: Կադաստրային արժեքի վճարման պարտականությունը կրում է գնորդը:

Առկա է հողամասի կադաստրային ծածկագրի անհամապատասխանություն՝ ըստ 21.11.2005թ.-ին տրված թիվ 0516030 սեփականության վկայականի հողամասի ծածկագիրը 01-011-0318-0050 է իսկ ըստ կադաստրային քարտեզի հողամասի ծածկագիրը 01-011-0694-0042 է:

Գույքի առուվաճառքի պայմանագրի կնքման, անհրաժեշտության դեպքում՝ դրանից ծագող իրավունքների պետական գրանցման եւ/կամ գնված գույքն ուրիշի տիրապետումից հետ պահանջելու եւ/կամ գույքը գնորդի փաստացի տիրապետմանն անցնելու հետ կապված գործողություններն ու դրանց առնչվող բոլոր ծախսերը, առուվաճառքի պայմանագրի կնքման համար անհրաժեշտ եւ առուվաճառքի պայմանագրից բխող բոլոր այլ (ցանկացած տեսակի) ծախսերը կատարվում են գնորդի միջոցներով եւ հաշվին:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն ա)ֆիզիկական անձի դեպքում անձնագրի պատճենը, իսկ իրավաբանական անձանց եւ անհատ ձեռներեցների դեպքում դրանց պետական գրանցումը հաստատող փաստաթղթերի պատճենները, բ) աճուրդի մասնակցության եւ նախավճարի վճարումը հաստատող փաստաթղթերը, մասնակցության վճարը եւ նախավճարը կազմում են մեկնարկային գնի 1 / բայց ոչ ավել քան 200,000 ՀՀ դրամ/ եւ 5 տոկոսները համապատասխանաբար: Մասնակցության վճարը եւ նախավճարը վճարվում են պարտապան՝ Սերժիկ Մկրտչյանի սնանկության հատուկ հաշվին «Ակբա Բանկ» ԲԲԸ-ի Նոր-Նորք մասնաճյուղի 220460442647000 h/h-ին մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00 ներառյալ:

Աճուրդին մասնակցել ցանկացողները աճուրդի անցկացման օրվան նախորդող 5 օրվա ընթացքում ընդհուպ մինչեւ աճուրդի նախորդ օրվա ժամը 16:00 կարող են հայտ ներկայացնել ՀՀ սնանկության դատարան, հասցե՝ (ՀՀ ք. Երեւան, Օտյան 53/2): Աճուրդում հաղթող մասնակից է համարվում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը: Գույքի մասին այլ տեղեկություններ ստանալու ինչպես նաեւ աճուրդի կանոնակարգին ծանոթանալու համար ցանկացողները կարող են զանգահարել Սերժիկ Մկրտչյանի սնանկության գործով կառավարիչ՝ Էդուարդ Սերոբյանին 077-64-22-00 հեռախոսահամարով:

Կառավարիչ՝ Է. Սերոբյան

## ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

# ՀԱՂԹՈՂՆԵՐԸ ԿՍՏԱՆԱՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿ

**2023 թ. փետրվարի 1-10-ը Ղազախստանի Ալմաթի քաղաքում կազմակերպված Ժաուտիկովյան միջազգային 19-րդ օլիմպիադայի հաղթողներին, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի հրամանով, կտրամադրվի անվանական կրթաթոշակ:**



Կրթաթոշակ կտրամադրվի 2 ոսկե, 5 արծաթե եւ 15 բրոնզե մեդալակիրների:

Ոսկե մեդալի են արժանացել՝

Միրաքյան Կամո - Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոց, 11-րդ դասարան, մաթեմատիկա,

Բարսեղյան Արեգ - Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոց, 12-րդ դասարան, ֆիզիկա:

Արծաթե մեդալի են արժանացել՝

Բաղդասարյան Վահան- Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոց, 11-րդ դասարան, մաթեմատիկա,

Մկրտչյան Արեգ - Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոց, 11-րդ դասարան, մաթեմատիկա,

Ղազարյան Ալեն - Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոց, 10-րդ դասարան, մաթեմատիկա,

Առաքելյան Մարիա - Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոց, 12-րդ դասարան, ֆիզիկա,

Պետրոսյան Համլետ - «Քվանտ» վարժարան, 12-րդ դասարան, ինֆորմատիկա:

Բրոնզե մեդալների են արժանացել՝

Բադալյան Մերի- Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոց, 12-րդ դասարան, մաթեմատիկա,

Հարության Արեն - Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոց, 11-րդ դասարան, մաթեմատիկա,

Եղիազարյան Միքայել - Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոց, 10-րդ դասարան, մաթեմատիկա,

Եգորյան Ծովակ - Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոց, 10-րդ դասարան, մաթեմատիկա,

Գրիգորյան Վահագն - «Քվանտ» վարժարան, 11-րդ դասարան, մաթեմատիկա,

Անդրիասյան Հայկ - «Քվանտ» վարժարան, 11-րդ դասարան, մաթեմատիկա,

Դարբինյան Աղասի - «Քվանտ» վարժարան, 10-րդ դասարան, մաթեմատիկա,

Գրիգորյան Ալեքս - «Քվանտ» վարժարան, 9-րդ դասարան, մաթեմատիկա,

Պետրոսյան Վյաչեսլավ - Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոց, 12-րդ դասարան, ֆիզիկա,

Սարգսյան Տիգրան - Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոց, 12-րդ դասարան, ինֆորմատիկա,

Աբելյան Սամվել - Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոց, 12-րդ դասարան, ինֆորմատիկա,

Գեւիկյան Ֆիլյա - Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոց, 12-րդ դասարան, ինֆորմատիկա,

Պարզյան Ռազմիկ- «Քվանտ» վարժարան, 12-րդ դասարան, ինֆորմատիկա,

Գեւորգյան Գագիկ - «Քվանտ» վարժարան, 10-րդ դասարան, ինֆորմատիկա,

Ենգոյան Դավիթ - Գյումրու «Ֆոտոն» վարժարան, 12-րդ դասարան, ինֆորմատիկա:

Նշենք, որ կրթաթոշակները տրամադրվում են՝ համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2019 թվականի սեպտեմբերի 3-ի 605-Ա/2 հրամանով հաստատված «Հանրակրթական ուսուցում իրականացնող ուսումնական հաստատությունների սովորողներին անվանական կրթաթոշակի տրամադրման» կարգի: Ըստ այդմ՝ եթե սովորողը միաժամանակ երկու կամ երեք հիմքով է ընդգրկվում կրթաթոշակ ստացողների ցանկում, ապա նա կարող է ստանալ դրանց հանրագումարի չափով կրթաթոշակ: Անվանական կրթաթոշակը սովորողներին տրվում է հաստատությունների միջոցով՝ մեկ տարվա հաշվարկով, իսկ ուսումնառությունը տվյալ հաստատությունում դադարելու դեպքում մեկ տարվա համար նախատեսված կրթաթոշակի չվճարված մասը սովորողին վճարվում է միանվագ: Սովորողներին խրախուսելու նպատակով սահմանված անվանական կրթաթոշակի նոր կարգը գործում է 2020 թ. հունվարի 1-ից:

Առարկայական օլիմպիադայի հաղթողների համար սահմանված են հետեւյալ կրթաթոշակները՝

1. միջազգային առարկայական օլիմպիադաների եզրափակիչ փուլերի մասնակիցներ՝

առաջին կարգի դիպլոմակիրներին՝ ամսական 25.000 դրամ,

երկրորդ կարգի դիպլոմակիրներին՝ ամսական 20.000 դրամ,

երրորդ կարգի դիպլոմակիրներին՝ ամսական 15.000 դրամ,

եզրափակիչ փուլերի այլ մասնակիցներին՝ ամսական 10.000 դրամ:

2. Միջազգային դպրոցական այլ օլիմպիադաների (Ժաուտիկովյան միջազգային օլիմպիադա, Մենդելեեւյան միջազգային օլիմպիադա եւ այլն) եզրափակիչ փուլերի մասնակիցներ՝

առաջին կարգի դիպլոմակիրներին՝ ամսական 15.000 դրամ,

երկրորդ կարգի դիպլոմակիրներին՝ ամսական 10.000 դրամ,

երրորդ կարգի դիպլոմակիրներին՝ ամսական 7.500 դրամ:

3. ՀՀ առարկայական հանրապետական օլիմպիադաների եզրափակիչ փուլերի հաղթողներ (դիպլոմակիրներ)՝

առաջին կարգի դիպլոմակիրներին՝ ամսական 10.000 դրամ,

երկրորդ կարգի դիպլոմակիրներին՝ ամսական 7.500 դրամ,

երրորդ կարգի դիպլոմակիրներին՝ ամսական 5.000 դրամ:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հրապարակային սակարկություններով աճուրդ-վաճառք**

«Մուռմել-Արմանի» ՍՊԸ-ին պատկանող՝ ստորեվ նշված շարժական գույքերը հրապարակային սակարկություններով (աճուրդ) վաճառելու մասին«Մուռմել-Արմանի» ՍՊԸ սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանի կողմից 11.04.2023 թվականին ժամը 15:00-ին ք. Երեւան, Ադոնցի 6/1, 303 հասցեում կանցկացվի ՀՀ Սնանկության դատարանի թիվ ՍնԴ/0719/04/20 սնանկության գործով 04.09.2020 թվականին կայացված վճռով սնանկ ճանաչված «Մուռմել-Արմանի» ՍՊԸ ստորեւ նշված շարժական գույքերի հրապարակային սակարկություններով վաճառքը հետեւյալ լոտերով.

Լոտ 2 - Պարտապանին սեփականության իրավունքով պատկանող եւ վերջինիս կողմից իր պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված «MAN» մակնիշի, TGA-18-430 տիպարի, 2004թ. արտադրության, 632 US 65 պետհամարանիշով, նարնջագույն, թափքի տեսակը՝ թամբային քարշակ, ՏՄ տեսակը՝բեռնատար ավտոմեքենան (նույնացման համար՝ WMAH13ZZ15M400073, գտնվելու վայրը՝ Վրաստանի հանրապետություն): Մեկնարկային գին՝7,800,000 ՀՀ դրամ:

Լոտ 3 - Պարտապանին սեփականության իրավունքով պատկանող եւ վերջինիս կողմից իր պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված «LECITRAILER» մակնիշի, D 2440 տիպարի, 2000թ. արտադրության, 228 L 01 պետհամարանիշով, գույնը՝ սպիտակ, թափքի տեսակը՝ սառնարան, ՏՄ տեսակը՝ կիսակցորդը (նույնացման համար՝ VV1F3FA1XSN097823, գտնվելու վայրը՝ Վրաստանի հանրապետություն): Մեկնարկային գին՝ 8,900,000 ՀՀ դրամ:

Լոտ 4 - Պարտապանին սեփականության իրավունքով պատկանող եւ վերջինիս կողմից իր պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված «MAN» մակնիշի, TGA-18.430 տիպարի, 2006թ. արտադրության, 090 PP 96 պետհամարանիշով, գույնը՝ դեղին, թափքի տեսակը՝ թամբային քարշակ, ՏՄ տեսակը՝բեռնատար ավտոմեքենան (նույնացման համար՝ WMAH13ZZ97M464106, գտնվելու վայրը՝ Վրաստանի հանրապետություն): Մեկնարկային գին՝ 9,000,000 ՀՀ դրամ:

Լոտ 5 - Պարտապանին սեփականության իրավունքով պատկանող եւ վերջինիս կողմից իր պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված «MAN» մակնիշի, TGA-18-430 տիպարի, 2005թ. արտադրության, 756 US 65 պետհամարանիշով, գույնը՝կարմիր, թափքի տեսակը՝ թամբային քարշակ, ՏՄ տեսակը՝բեռնատար ավտոմեքենան (նույնացման համար՝ WMAH06ZZ85M423273, գտնվելու վայրը՝ Վրաստանի հանրապետություն): Մեկնարկային գին՝8,500,000 ՀՀ դրամ:

Լոտ 10 - Պարտապանին սեփականության իրավունքով պատկանող «ZIL» մակնիշի, 130 տիպարի, 1969թ. արտադրության, 843 UL 64 պետհամարանիշով, գույնը՝ կապույտ, թափքի տեսակը՝ֆուրգոն, ՏՄ տեսակը՝բեռնատար ավտոմեքենան (գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երեւան, Ծիծեռնակաբերդի 38, ավտոկայանատեղի): Մեկնարկային գին՝1,422,000 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

ա/ ֆիզիկական անձանց դեպքում՝ անձնագրի պատճենը,

բ/ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի դեպքում՝ դրանց պետական գրանցում հավաստող փաստաթղթերի պատճենները,

գ/ աճուրդի մասնակցության վճարի եւ նախավճարի վճարումները հավաստող փաստաթղթերը (անդորրագրերը):

Աճուրդում ներկայացված բոլոր գույքերի վրա առկա են «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված սահմանափակումներ:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք աճուրդին մասնակցելու համար կարող են աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ներկայացնել ՀՀ սնանկության դատարան սույն հայտարարությունը հրապարակվելուց հետո մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ն ընկած ժամանակահատվածում:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք վճարում են մասնակցության վճար եւ նախավճար, որոնք կազմում են տվյալ լոտի մեկնարկային գնի համապատասխանաբար 1 (ոչ ավել քան 10,000 ՀՀ դրամը) եւ 5 տոկոսները:

Մասնակցության վճարը եւ նախավճարը ենթակա են վճարման «Մուռմել-Արմանի» ՍՊԸ սնանկության գործով թիվ 2480103421570000 «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ հատուկ հաշվին՝ մինչեւ աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ՀՀ սնանկության դատարան ներկայացնելը:

Սույն հայտարարությամբ նախատեսված աճուրդի օրը կարող է փոխվել եւ/կամ հետաձգվել՝ այդ մասին աճուրդի օրվանից ոչ պակաս երեք օր առաջ համապատասխան հայտարարություն կատարելու միջոցով:

Աճուրդն անցկացվելու է բաց դասական (գնի ավելացման) եղանակով, հետեւաբար աճուրդում հաղթող է համարվում առավել բարձր գին վճարող մասնակիցը:

Աճուրդում հաղթող ճանաչվելու դեպքում, լոտի արժեքը ենթակա է վճարման աճուրդն անցկացնելու օրվանից 10 (տասը) օրյա ժամկետում սնանկության հատուկ հաշվին լոտի գնման գինը՝ հաշվանցելով նախօրոք վճարած նախավճարը:

Աճուրդում հաղթող համարվող անձի հետ առուվաճառքի պայմանագրի կնքման, դրանից ծագող իրավունքների պետական գրանցման, գույքը գնորդին փոխանցելու եւ պայմանագրից բխող բոլոր անհրաժեշտ ծախսերը ենթակա են կատարման աճուրդում հաղթող համարվող անձի կողմից:

Աճուրդի անցկացման, լոտի ծանոթացման եւ ուսումնասիրության համար դիմել սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանին (հեռ.՝ 044200454, էլ. Փոստ՝ makar.yeg@gmail.com)՝ աշխատանքային օրերին 11:00-16:00-ն ընկած ժամանակահատվածում:

Գ.

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՊՐԵՄԻԵՐԱ

# ՆՈՐ ՓԱՌԱՏՈՆ՝ ԵՐԵՒԱՆՈՒՄ

**Հայ կոմպոզիտորական արվեստի 14-րդ փառատոնը հագեցած է պրեմիերաներով: ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ մարտի 16-20-ը Երեւանում կանցկացվի Հայ կոմպոզիտորական արվեստի 14-րդ փառատոնը: Այս մասին ArmLur.am-ը տեղեկացավ ՀՀ ԿԳՄՍ նախարարության հասարակայնության հետ կապերի եւ տեղեկատվության վարչությունից: Փառատոնը հիմնադրվել է Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի եւ Հայաստանի կոմպոզիտորների միության կողմից: 2023թ. փառատոնի ծրագրերը հագեցած են պրեմիերաներով: Փառատոնի բացման համերգին՝ մարտի 16-ին, առաջին անգամ Հայաստանում կհնչի Հարություն Դելլալյանի «Մահ» սիմֆոնիկ պոեմը՝ Նորայր Հարությունյանի Կոնցերտինոն դաշնամուրի եւ նվագախմբի համար:**




Փառատոնի բացման համերգին կհնչի Ժիրայր Շահրիմանյանի Առաջին սիմֆոնիան, որը ստեղծվել է կոմպոզիտորի եւ նվագախմբի համագործակցության արդյունքում, եւ որը կոմպոզիտորը նվիրել է Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբին: Ապրիլի 17-ի համերգի ընթացքում կհնչեն Արամ Սաթյանի Թավջութակի կոնցերտը, Դավիթ Սաքոյանի Պասակալիա եւ ֆուգա թիվ 2 ստեղծագործությունը՝ սիմֆոնիկ նվագախմբի համար, ինչպես նաեւ Ջիվան Տեր-Թադեւոսյանի 5-րդ սիմֆոնիան՝ «Պագանինի», որը նվիրված է Դմիտրի Շոստակովիչին: Ապրիլի 20-ի համերգին երաժշտասերները կունկնդրեն Սուրեն Զաքարյանի «Մոնոգրաֆիան»՝ թավջութակի եւ կամերային նվագախմբի համար, Տիգրան Մանսուրյանի Թավջութակի թիվ 1 կոնցերտը՝նվիրված Դմիտրի Շոստակովիչի հիշատակին, եւ հատվածներ Գրիգոր Եղիազարյանի «Սեւան» բալետից: Փառատոնի շրջանակում Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի հետ հանդես կգան դաշնակահար, միջազգային մրցույթների դափնեկիր Լիլիթ Արտեմյանը, թավջութակահար Դավիթ Եժովը: Փառատոնի փակման համերգին ելույթ կունենա անվանի թավջութակահար Լեւոն Մուրադյանը, որի կատարմամբ կհնչի Տիգրան Մանսուրյանի Թավջութակի առաջին կոնցերտը եւ Սուրեն Զաքարյանի «Մոնոգրաֆիան» թավջութակի եւ նվագախմբի համար:

Հայ կոմպոզիտորական արվեստի 14-րդ փառատոնի համերգները կղեկավարեն Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Սերգեյ Սմբատյանը, ինչպես նաեւ նվագախմբի գլխավոր հրավիրյալ դիրիժոր Ջանլուկա Մարչիանոն եւ հանրահայտ Անտալ Դորատի դիրիժորների միջազգային մրցույթի առաջին մրցանակակիր Ռեմի Դյուրուն: Փառատոնի բոլոր համերգները ձայնագրվում եւ տեսագրվում են ժամանակակից բարձրակարգ սարքավորումների միջոցով եւ հետարտադրական ընթացքից հետո տեղադրվում են նվագախմբի սոցիալական էջերում, նվագախմբի կայքում, ինչպես նաեւ հանրահայտ միջազգային թվային հարթակներում:

Նշենք, որ Հայ կոմպոզիտորական արվեստի փառատոնը հայաստանյան մշակութային կյանքի նշանակալի իրադարձություններից է եւ 2010 թվականին հիմնադրվելուց ի վեր անշեղորեն հետեւում է հայ դասական եւ արդի կոմպոզիտորական դպրոցի, ավանդույթների պահպանման, ճանաչման եւ ընդլայնման իր առաքելությանը: Փառատոնի կարեւորագույն բաղադրիչներից է հայ կոմպոզիտորների սիմֆոնիկ եւ կամերային ստեղծագործությունների ձայնագրումը, տեսագրումը, պարտիտուրների եւ նվագաբաժինների թվայնացումն ու պահպանումը: Հայտնի է, որ հայ կոմպոզիտորների բազմաթիվ ստեղծագործությունների պարտիտուրներ դեռեւս մնում են հեղինակների անձնական կամ այլ արխիվներում եւ հաճախ գտնվում են անմխիթար վիճակում՝ հասանելի չլինելով ստեղծագործությունների համերգային ներկայացման համար: Փառատոնի ողջ ընթացքում թվայնացվել են հայ կոմպոզիտորների ավելի քան 100 մեծակտավ ստեղծագործություններ. ձայնագրվել են 250-ից ավելի երաժշտական երկեր, իրականացվել են 180-ից ավելի պրեմիերաներ՝ ներգրավելով Հայաստանում գործող երգչախմբերին, նվագախմբերին եւ կամերային համույթներին, ինչպես նաեւ բազմաթիվ անհատ կատարողների, այդ թվում՝ տաղանդավոր երիտասարդ երաժիշտների: Անցած տարիների ընթացքում Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը ժամանակակից ձայնագրման տեխնոլոգիաների կիրառմամբ ձայնագրել է հայ կոմպոզիտորների ավելի քան 15 մեծակտավ ստեղծագործություններ, որոնք ամենամյա պարբերականությամբ թողարկվում են նվագախմբի սեփական Armsymphony Records ձայնապիտակի վրա:

Փառատոնի ընթացքում հնչած հայ կոմպոզիտորների ստեղծագործությունները նաեւ տեղ են գտնում հայտնի մեդիա հարթակներում, ինչպիսիք են Mezzo TV-ն, Medici TV-ն եւ այլն: Փառատոնը հնարավորություն է ստեղծում մեծանուն կոմպոզիտորների երաժշտական ժառանգության կողքին ներկայացնելու նաեւ երիտասարդ եւ նորահայտ կոմպոզիտորների ստեղծագործություններ:

ԼՈՒՐԵՐ

## ՀԱՅՏՆԻ ԵՆ ՀԱՂԹՈՂՆԵՐԸ

Երեւանի պետական համալսարանում անցկացվեց «Ինֆորմատիկա» առարկայի օլիմպիադայի հանրապետական փուլը, որին մասնակցած ավելի քան 40 դպրոցականներից հաղթող ճանաչվեցին երեքը:

Ավագ տարիքային խմբում (10-12-րդ դաս.) առաջին տեղը գրավել է Երեւանի պետական համալսարանին առընթեր Արտաշես Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական հատուկ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտ Սամվել Աբելյանը:

Կրտսեր տարիքային խմբում (7-9-րդ դաս.) առաջին տեղը զբաղեցրել են ԵՊՀ-ին առընթեր Ա. Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական հատուկ դպրոցի աշակերտ Ալեքսանդր Ղազարյանը եւ «Քվանտ» վարժարանի աշակերտ Ալեքս Գրիգորյանը:

Նշենք, որ հաղթողներին կհանձնվեն դիպլոմներ ԿԳՄՍՆ-ի կողմից:

Դիպլոմակիր աշակերտներից ձեւավորվելու է ընտրական խումբ, որի հետ անցկացվելու են մասնագիտական պարապմունքներ, կազմակերպվելու են մրցույթներ: Խմբում իրենց լավագույնս դրսեւորած աշակերտները կմասնակցեն ինֆորմատիկայի միջազգային օլիմպիադային:

Հավելենք, որ ինֆորմատիկայի օլիմպիադայի հանրապետական փուլը տարիներ շարունակ համակարգում է ԵՊՀ ինֆորմատիկայի եւ կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետը:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կորել է Բեգլյան Արտակ Էդուարդի ատեստատը՝ տրված թիվ 23 Տեխնիկական մասնագիտական ուսումնարանի կողմից 2001թ.-ին: Տեղեկություններ իմանալու դեպքում խնդրում ենք զանգահարել 091 20 55 99 հեռախոսահամարով:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «Ակսոն» ԱՀ Բորսայի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը.

- Արմավիրի մարզ, համայնք Պտղունք, Անդրանիկի փողոց, 18 հասցեում գտնվող 213.8 ք.մ. բնակելի տուն, 1.8 ք.մ. զուգարան, 2 ք.մ. զուգարան, 16.6 ք.մ. թռչնանոց, 3.6 ք.մ. կաթսայատուն, 3.8 ք.մ. ծածկ, 9.6 ք.մ. /17.3 խ.մ./ պարիսպ, 22.5 ք.մ. ծածկ եւ 0.0798 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 37300000 ՀՀ դրամ:

- Վայոց ձորի մարզ, համայնք Եղեգնաձոր ք., Անդրանիկի փողոց, 19 շենք, 2 հասցեում գտնվող 42,6 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 7670000 ՀՀ դրամ:

- Գեղարքունիքի մարզ, համայնք Գավառ, Գավառ ք?, Ազատության փողոց, 35 շենք, 24 հասցեում գտնվող 75,7 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝6060000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Քանաքեռ-Զեյթուն, Ռուբինյանց փողոց, 4ա շենք, 39 հասցեում գտնվող 50,4 ք.մ. բնակարան եւ 1,8 ք.մ. ինքնակամ շինություն: Լոտի մեկնարկային գինը՝24060000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Աջափնյակ, Շինարարների փողոց, 10 շենք, 5 հասցեում գտնվող 26,6 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝16000000 ՀՀ դրամ:

- Լոռու մարզ, համայնք Ստեփանավան, Ստեփանավան ք., Մատրոսովի փողոց, 8 հասցեում գտնվող 230,3 ք.մ. բնակելի տուն, 8,1 ք.մ. սանհանգույց, 17,12 ք.մ. անասնաշենք, 4,8 ք.մ. /7,9 խ.մ./ պարիսպ եւ 0,0605 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 22500000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Աջափնյակ, Հ. Մարգարյան փողոց, 1-ին նրբանցք, 8 շենք, 40 հասցեում գտնվող 45.1 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 24400000 ՀՀ դրամ:

Լոտերի նկատմամբ սահմանափակումները՝ գույքերը գրավադրված են:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 31.03.2023թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 01.05.2023թ.-ին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին) կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կայ այցելել www.llcbst.am, www.akson.am կայքերը:

*● Մարտի 16-ին Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը տեղի կունենա «20-րդ դարի համաշխարհային գոհարներ» համերգը: Տոմսերի արժեքը՝2000-5000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

# ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

*Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ*

## ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

**ՀԱՐՑ. Ինչպե՞ս կարող եմ մաքրել իմ վարկային պատմությունը:**

*Նելլի Մարտիրոսյան (38 տարեկան)*



**ՊԱՏԱՍԽԱՆ.** Ն. Մարտիրոսյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ վարկային տեղեկատվությունը կամ «վարկային պատմությունը» Ձեր (վարկառուի) վերաբերյալ վարկային տեղեկատվությունն է, որը բնութագրում է Ձեր կողմից ստանձնած վարկային պարտավորությունների մասով պարտքերը, վճարումները, վճարումների սովորությունները կամ պարտավորությունների կամ դրանց կատարման վերաբերյալ տեղեկատվություններ: Գործնականում «վատ վարկային պատմությունը մաքրել» նշանակում է ընթացիկ վարկային զեկույցներում չունենալ խնդրահարույց (ժամկետանց կամ սուբյեկտիվ չափանիշներով դասակարգված) վարկեր:

Վարկային բյուրոն չպետք է ներառի վարկային զեկույցում վարկային տեղեկատվության սուբյեկտի վերաբերյալ վարկային զեկույցի տրամադրման պահին նախորդող հինգ տարուց ավելի վարկային տեղեկատվություն: Հինգ տարին ավարտվելուց հետո նշված տեղեկատվությունը արխիվացվում է: («Վարկային տեղեկատվության շրջանառության եւ վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ ենթակետ):

***Ֆինանսական համակարգի հաշտարար***

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Վարկային բյուրոյի հիմնական նպատակն է իրականացնել վարկային տեղեկատվության, դրա համար անհրաժեշտ վարկային տեղեկատվության սուբյեկտի տվյալների հավաքման, վարկային պատմությունների մշակման, ձեւավորման եւ պահպանման, դրանց հիման վրա վարկային զեկույցի պատրաստման գործունեություն: Ի դեպ, վարկային բյուրոյի գործունեության լիցենզիան անժամկետ է: Վերջինիս գործունեության լիցենզիան չի կարող այլ անձանց տրվել օգտագործման, օտարվել կամ գրավադրվել:

## ԿՐԹԱԿԱՆ

**ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ, թե ինչպես է իրականացվում ուսանողի՝ բուհից բուհ տեղափոխությունը:**

*Սիրարփի Մխոյան (33 տարեկան)*



**ՊԱՏԱՍԽԱՆ.** Քաղաքացու հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ ուսանողի՝ բուհից բուհ տեղափոխությունը, որի ընթացքում կարող է անցում կատարվել նույն մասնագիտությամբ, մեկ մասնագիտությունից մյուսը կամ փոխվել ուսուցման ձեւը (առկա, հեռակա, հեռավար), իրականացվում է ընդունող բուհի ռեկտորին հասցեագրված՝ ուսանողի անձնական դիմումի համաձայն, որին կցվում է նաեւ սովորած բուհի կողմից տրամադրված ակադեմիական տեղեկանքը:

Տեղափոխվող ուսանողի հրամանագրումը կատարում է ընդունող բուհի ռեկտորը ուսանողի դիմումը, միջնակարգ կրթության ավարտական վկայականը եւ ակադեմիական տեղեկանքը ստանալուց հետո (մինչեւ այդ ստուգվում է ակադեմիական տեղեկանքի եւ ստուգման գրքույկի պատճենի համապատասխանությունը):

ՀՀ կրթության, գիտության, սպորտի եւ մշակույթի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ ուսանողի՝ բուհի ներսում տեղափոխությունը, որի ընթացքում կարող է անցում կատարվել մեկ մասնագիտությունից մյուսը կամ փոխվել ուսուցման ձեւը (առկա, հեռակա, հեռավար), իրականացվում է բուհի ռեկտորի հրամանով՝ ուսանողի անձնական դիմումի համաձայն:

## ԼՈՒՐ ԿԱԴՐ

*Լուսանկարը՝ համացանցից*




Առաջին անգամ գրեփլինգի պատմության մեջ Հայաստանը ոսկե մեդալ է նվաճել Եվրոպայի առաջնությունում:

Եվրոպայի չեմպիոնի կոչումը նվաճել է Հայաստանի ներկայացուցիչ Մայիս Ներսեսյանը՝ 62 կգ քաշային կարգի եզրափակչում համառ պայքարի արդյունքում նա հաղթել է աշխարհի եւ Եվրոպայի առաջնությունների բազմակի չեմպիոն Իսրայելի ներկայացուցչին:

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:




Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

## ԱՌԱՋԱՐԿ
### հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

**Բաժանորդագրության բլանկ**

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

*Հեռ.՝ (060) 490049*
*0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.*




*«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **14.03.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: